

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԱԳԻՐ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական

բժշկական համալսարանի ռեկտոր

պարոն Արմեն Մուրադյանին

ՀՀ քաղաքացի Հայկանուշ Միրզախանյանից

Հարգելի պարոն Արմեն Մուրադյան այս նամակով իմ երախտագիտական շնորհակալությունն եմ հայտնում «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր պլաստիկ վերականգնողական վիրաբուժության և միկրովիրաբուժության բաժանմունքի բուժ. անձնակազմին՝ ի դեմս ինձ վիրահատող և բուժող բժիշկ Թեհմինե Հմայակի Ասատրյանին:

Դիմել եմ 2017թ հուլիսի 14-ին, երբ առավոտյան աշխատանքի գնալիս քայլելու ընթացքում կրունկիս հատվածում շատ ուժեղ և սուր ցավ զգացի: Անմիջապես դիմել եմ մեր տեղամասային պոլիկլինիկա, որտեղ մեկ ամիս առաջ կրունկիս հատվածում արվել էր երկու ներարկում մեկ շաբաթյա ընդմիջումով: Անկեղծորեն պիտի նշեմ, որ նախքան ներարկումը տարիներ շարունակ ունեցել եմ սուր ցավեր, որոնց լուրջ նշանակություն չտալով՝ չեմ դիմել բժշկի: Տեղամասային պոլիկլինիկա դիմեցի միայն այն ժամանակ, երբ արդեն հաճախակի դարձած ցավերի պատճառով չէի կարողանում քայլել:

Վերջիններիս խորհրդով դիմել եմք «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր, հերթապահ բժիշկ Թեհմինե Հմայակի Ասատրյանին: Իմ անհետևողականության, ժամանակին բժշկի չդիմելու, ինչպես նաև սխալ բուժման պատճառով ունեի աքիլեյան ջլի փակ պոկում: Վիրահատությունից հետո կրունկի հատվածում ունեի վերքեր, որոնք ոչ մի կերպ չէին վերականգնվում: Այդ իսկ պատճառով կատարվեց պլաստիկ վիրահատություն: Ամիսներ տևած բուժումը, չնայած իր դժվարություններին, հաջողությամբ ավարտվեց իմ բժշկի մեծ ջանքերի, հոգատարության ու բարձր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ: Վստահ էի, որ ցանկացած դեպքում իմ բժիշկ Թեհմինե Ասատրյանի շնորհիվ դարձյալ քայլելու եմ: Նշեմ նաև ինձ համար շատ կարևոր մի փաստ, որ այս ընթացքում իմ բժշկից սովորեցի պայքարել ու չհանձնվել ոչ մի դեպքում, գիտակցեցի, որ պետք է հետևողական լինել առողջությանը:

Շնորհակալ եմ, որ Դուք կաք ու մեր կողքին եք:

ՀՀ քաղաքացի



Հ. Միրզախանյան

Ք. Երևան 22 մայիսի 2018թ

